ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի գործընկերներ՝

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմն իրազեկում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի համաձայն՝ ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո **նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փարաքար համայնքի ղեկավարը 2024 թվականի նոյեմբերի 18-ին հրաժարական է տվել, իսկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը թափուր է, ուստի Փարաքար համայնքի ավագանու կողմից գումարվող նիստերը վարվելու են **ավագանու տվյալ նիստին ներկա տարիքով ավագ անդամի կողմից՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առաջացած խնդրի լուծումը:**

Ներկայացված իրավակարգավորումները հիմք ընդունելով՝ իրազեկվում է նաև, որ Փարաքարի համայնքապետարանի տեղեկատվական համակարգի առանձնահատկություններով և սահմանափակումներով պայմանավորված՝ Փարաքարի համայնքապետարանի պաշտոնական կայքի «ՏԻՄ» բաժնի «Համայնքի ավագանի» ենթաբաժնի «Ավագանու նիստեր» պարբերության էջում 2024 թվականի նոյեմբերի 27-ի հերթական, ինչպես նաև նոյեմբերի 29-ի արտահերթ նիստերի վարող նշվել է «Կարապետ Արթենյան», սակայն գումարված նիստերը վարվելու է **ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամի կողմից**:

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ

26.11.2024թ.